Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1073 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇՎԵԴԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ

1. Շվեդիայի Թագավորության տարածքում առանց թույլտվության բնակվող Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա քաղաքացիների հետընդունման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ պետությունների քաղաքացիների տարանցման մասին դիմումները (այսուհետ՝ դիմումներ) ստացվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունում (այսուհետ՝ միգրացիոն գործակալություն)։

2. Միգրացիոն գործակալությունն ստացված դիմումները հաշվառում է հատուկ գրանցամատյանում՝ համաձայն ձևի։

3. Միգրացիոն գործակալությունը դիմումներն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում դրանք ուղարկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն (այսուհետ՝ ոստիկանություն)։

4. Ոստիկանությունը՝

1) Շվեդիայի Թագավորության տարածքում առանց թույլտվության բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետընդունման մասին դիմումներին պատասխանում է 30-օրյա ժամկետում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու փաստը.

2) Շվեդիայի Թագավորության տարածքում առանց թույլտվության բնակվող օտարերկրյա քաղաքացիների հետընդունման մասին դիմումներին պատասխանում է 30-օրյա ժամկետում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք տվող կացության կարգավիճակ ունենալու կամ Հայաստանի Հանրապետության կողմից տրված մուտքի թույլտվության փաստը։

5. Միգրացիոն գործակալությունը սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց հետընդունման մասին դիմումներն անհրաժեշտության դեպքում ուղարկում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ազգային անվտանգության ծառայություն) և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն (այսուհետ՝ արտաքին գործերի նախարարություն), որոնք 30-օրյա ժամկետում պատասխանում են հարցումներին։

6. Միգրացիոն գործակալությունը Շվեդիայի Թագավորության տարածքում առանց թույլտվության բնակվող երրորդ պետությունների քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման մասին դիմումներն ուղարկում է ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն։ Վերջիններս պատասխանն ուղարկում են 15-օրյա ժամկետում՝ անձի տարանցման վերաբերյալ անհամաձայնության դեպքում, այն հիմնավորելով ազգային անվտանգությանը, հասարակական կարգին, հանրային առողջությանն սպառնացող վտանգով։

7. Միգրացիոն գործակալությունը, հիմք ընդունելով ստացված պատասխանները, 7-օրյա ժամկետում նախապատրաստում և շվեդական կողմին է ուղարկում դիմումների պատասխանները։

8. Հայաստանի Հանրապետության կողմից հետընդունման ենթակա անձանց տեղափոխման երթուղու և օրվա մասին շվեդական կողմից տեղեկություններն ստա-

նալուն պես միգրացիոն գործակալությունը դրանք տրամադրում է ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերին։

9. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը Հայաստանի Հանրապետության կողմից հետընդունման ենթակա այն անձանց, ովքեր չունեն ճամփորդական փաստաթղթեր, շվեդական կողմի դիմումի հիման վրա, դիմումն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում տրամադրում է վերադարձի վկայական՝ առնվազն 60 օր վավերականության ժամկետով։ Եթե այդ ընթացքում հնարավոր չի լինում անձին փոխադրել, ապա առավելագույնը 7-օրյա ժամկետում անձին տրամադրվում է նոր ճամփորդական փաստաթուղթ՝ նույն վավերականության ժամկետով։

10. Շվեդիայի Թագավորության տարածքում առանց թույլտվության բնակվող Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա քաղաքացիների՝ մինչև Հայաստանի Հանրապետության սահման փոխադրման ծախսերը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ պետությունների քաղաքացիների՝ մինչև նպատակակետ երկրի սահման տարանցման հետ կապված ծախսերը հոգում է շվեդական կողմը։

11. Անձի քաղաքացիությունը և ինքնությունը հաստատելու դժվարության և շվեդական կողմից խնդրանքի առկայության դեպքում միգրացիոն գործակալությունը, ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը և արտաքին գործերի նախարարությունը գործուղում են իրենց աշխատողներին՝ անձի հետ հարցազրույց անցկացնելու նպատակով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ,
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ, ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Դիմումում նշված անձի անունը, հայրանունը, ազգանունը	Դիմումի ստացման օրը, ամիսը, տարեթիվը	Դիմումում նշված անձի քաղաքացիությունը	Դիմումի բովանդակությունը	Դիմումը ՀՀ պետական մարմիններ ուղարկելու օրը, ամիսը, տարեթիվը	Պատասխանն ստանալու օրը, ամիսը, տարեթիվը	Պատասխանի բովանդակությունը	Շվեդական կողմին պատասխանելու օրը, ամիսը, տարեթիվը	Ծանոթագրություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10

09_1073